



ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ

ԱՇԽԱՐՀՈՒՄ

Ըստ պահպանվող փարածքների համաշխարհային փվյալների բազայի (WDPA.09.2024.) (SPA) դրանց ընդհանուր թիվը կազմում է 305,014 (303,182 պահպանվող փարածք), որը ներառում է 292,983 արեալ և 12,031 կեփային փարածք և ընդգրկում է 244 երկիր և առանձին փարածք: Հայրուկ պահպանության փարածքներ ներառում են նաև չվող թռչունների և առանձնապես վրանգված թռչունների բնակության վայրերը:

Ներկայումս մոտ 190 երկիր պարտավորվել է հասնել համաշխարհային նպատակի՝ մինչև 2030 թվականը աշխարհի ցամաքի, քաղցրահամ ջրերի և օվկիանոսների 30%-ի արդյունավետ պաշտպանությունն ու կառավարումը: Նպատակի սիմվոլիկ անունն է 30x30, այն ամենամեծ պահպանական և հետազոտական պարտավորությունն է, որը երբևէ ստանձնել է աշխարհը: Պահպանվող փարածքները բաժանված են 6 կատեգորիաների՝

1ա. խիստ արգելոց,

1բ. անսպասարային փարածք,

2. ազգային պարկ.

3. բնության հուշարձան կամ առանձնահատկություն,

4. աձելավայրի կամ տեսակների կառավարման փարածք,

5. պաշտպանված լանդշաֆտ կամ ծովային լանդշաֆտ,

6. բնական ռեսուրսների կայուն օգտագործմամբ պահպանվող փարածք:

Հետազոտության փազնապալի եզրակացությունն այն է, որ ներկայումս պաշտպանված է հողափարածքի միայն 18%-ը (10 հունվարի 2024թ.), ինչը կարևոր է համարվում ինչպես մարդու բարեկեցության, այնպես էլ կենսաբազմազանության համար: Այս վիճակագրությունն ընդգծում է պահպանության ջանքերի զգալի բացը՝ ընդգծելով կենսական փարածքները պաշտպանելու համար հրատապ գործողությունների անհրաժեշտությունը:

ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Համաձայն «Բնության հայրուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի օրենքի (1991)՝ որպես բնության հայրուկ պահպանվող տարածքներ երաշխավորված են ազգային պարկերը, արգելոցները, արգելավայրերը և բնության հուշարձանները: Հանրապետությունում գործում են 4 ազգային պարկ (Սևան, Դիլիջան)՝ 178102 հա, Արփի լճի և Արևիկ:

3 արգելոց (Խոսրովի անտառ, Շիկահողի, Էրեբունի)՝ 39615 հա ընդհանուր տարածքով (1,33%-ը): 26 արգելավայր՝ 89442 հա ընդհանուր տարածքով: Բնության հայրուկ պահպանվող տարածքների ընդհանուր մակերեսը (ներառյալ Սևանա լիճը) 307159 հա է՝ ինչը կազմում է Հայաստանի Հանրապետության տարածքի 10,3%-ը:

Իսկ ինչպես են բնության հայրուկ պահպանվող տարածքները զերծ մնում աղտոտումից: Հնարավոր աղտոտումները բացառելու և բնակչության փնտրածական գործունեությունը սահմանափակելու ու կառավարելու համար Հայաստանի Կառավարությունը սահմանել է հայրուկ պահպանվող տարածքներին հարող որոշակի տարածքներ որպես դրանց պահպանական գոտիներ: Այսպես օրինակ՝ «Սևան» ազգային պարկի ընդհանուր տարածքը՝ Սևանա լճի հայելու հետ միասին կազմում է 147.343 հա, իսկ առանց լճի հայելու՝ 22,585 հա, մինչդեռ լճի պահպանական գոտու տարածքը կազմում է 342.920 հա:



Սևան Ազգային պարկ

Բնության հայրուկ պահպանվող տարածքներում պահպանվում են Հայաստանի բուսական և կենդանական աշխարհների փեսակային կազմի 60%-ը, այդ թվում՝ հազվագյուտ, անհետացման եզրին հայտնված և բնաշխարհիկ փեսակների գերակշռող մասը, ինչպես նաև վայրի գենետիկական պաշարները: Ցամաքային լանդշաֆտների պահպանվող տարածքները կազմում են Հայաստանի տարածքի մոտ 6%-ը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի որոշմամբ հանրապետության տարածքում առանձնացվել են 230 բնական հուշարձաններ: Դրանց առանձնացման նպատակն է մարդու ակտիվ գործունեությունից զերծ պահել գի-

տաճանաչողական բարձրարժեք և եզակի համալիրները, դրանց բնական, երկրաբանական առանձնահատկությունները ցուցադրելու համար: 230 բնական հուշարձաններից 109-ը հանդիսանում են երկրաբանական (Աժդահակ և Արմաղան հրաբուխները, Գառնիի «Բազալտե երգեհոն» սյունաձև բազալտները, Որոտանի վրա գտնվող «Սալաթի կամուրջ»-ը), 48-ը՝ ջրաերկրաբանական (Ապարանի «Սրբի աղբյուր», Մալիշկա գյուղի «Մեզ աղբյուր»), 38-ը՝ ջրագրական (Շաքիի ջրվեժ, Գեղամա լեռների «Վիշապալիճ»), 16-ը՝ բնապարմական (Երիցվանքի մոտ գտնվող Արծվանիկ գյուղի բնական քարայրներ), 19-ը՝ կենսաբանական հուշարձաններ (Շիրակի «Փետրախոտային տափասարան», Տավուշի մարզի «Սարի գյուղի սուհն»):

Խոսրովի անտառ արգելոցը կազմավորվել է 1958-ին (տարածքը՝ 23213.5 հա), Հայաստանի Արարատի մարզում՝ Գեղամա լեռնավահանի հարավարևմտյան՝ Ուրծի, Դահնակի, Երանոսի լեռնաշղթաների, Իրից, Խոսրովասար լեռների լանջերին՝ Ազապ և Վեդի գետերի ավազաններում՝ ծովի մակարդակից 700-2800 մ բարձրություններում՝ Ազապ գետի ջրային պաշարների, գիհուրների, կաղնուրների, լեռնաչորասեր բուսականության, հազվագյուտ կենդանիների ու բույսերի պահպանության նպատակով:

Շիկահողի արգելոցը կազմավորվել է 1958-ին Հայաստանի Սյունիքի մարզում՝ Խոսրովի լեռնազանգվածի հարավարևելյան և Մեղրու լեռնաշղթայի հյուսիսարևելյան լանջերին՝ ծովի մակարդակից 700-2800 մ բարձրություններում՝ Ծավ և Շիկահող գետերի վերին ավազաններում՝ կաղնու, բոխու, հաճարենու, սովորական կենու, սոսու անտառների և կենդանիների պահպանության նպատակով:

Էրեբունի արգելոցը կազմավորվել է 1981-ին (տարածքը՝ 89 հեկտար) Հայաստանի Կոտայքի մարզում՝ Երևանից 8-10 հարավարևելյան՝ Գեղաղիբ գյուղի մոտ՝ կիսասանապարային և լեռնաբախտաբանային գոտիների անցումային հատվածում՝ ծովի մակարդակից 1300-1450 մ բարձրություններում՝ դաշտավայրային վայրի ազգակիցների (մասնավորապես վայրի ցորենների աշխարհում եզակի գենոֆոնդի) պահպանության նպատակով:



«Դիլիջան» ազգային պարկը



Անտառը թթվածնի հսկայական «գործարան» է

Բույսերը սինթեզել են հսկայական քանակությամբ օրգանական նյութ, որի մի զգալի մասը մեզ է հասել՝ նավթի, բնական գազի, քարածխի, փորֆի պաշարների ձևով: Բացի ածխածնից, ջրածնից և թթվածնից օրգանական նյութերի կազմի մեջ մտնում են նաև ազոտի, ֆոսֆորի, ծծմբի և այլ տարրերի ատոմներ, որոնք հողից կլանվում են բույսերի կողմից և ընդգրկվում բարդ քիմիական գործընթացներում:

Այս մասին մենք խոսել ենք նախօրը՝ Հողերի քայքայում և անապատացում պարագրաֆում:

Անտառները նաև բազմաթիվ կենդանիների և թռչունների գոյության միջավայր են, նաև մեղմացնում են տարածքի կլիմայական պայմանները, սրեղծում նպաստավոր միկրոկլիմա, փոքրացնում ջրի մակերեսային հոսքը, ամրացնում սողանքավորանգ հողերը և աղբյուրումից պահպանում գրունտային ջրերի պաշարները: Մարդու համար անտառը սննդի, դեղամիջոցների, արտադրական հումքի, շինանյութի աղբյուր է: Անտառները դրական են ազդում մարդու հոգեվիճակի վրա, մեծ նշանակություն ունեն հանգստի և առողջության վերականգնման համար:

Երկրի բուսածածկի բաղադրիչներից ամենակարևոր դերը պատկանում է անտառներին: Մարդու տնտեսական գործունեության առաջին օբյեկտը հենց անտառներն էին, ինչի հետևանքով դրանք արագ ամենաշարք տուժեցին, դառնալով Էկոլոգիական խնդիր: Անտառների շահագործումն ու ոչնչացումն սկսվել է դեռ մարդկության զարգացման վաղ շրջաններից և շարունակվում է մինչև մեր օրերը: Վերջին 10 հազար տարվա ընթացքում ոչնչացվել է Երկիր մոլորակը պարող անտառների մոտ 2/3 մասը: Անտառային պաշարները տուժել են արդյունաբերական հեղափոխության հետ: Հայրված անտառային տարածքները աստիճանաբար վերածվում են անկենդան անապատների: Ներկայումս առավել արագ հատվում են արևադարձային անտառները: Դրանց մակերեսի կրճատման տեմպը կարող է հասցնել աղետալի իրավիճակի:

Վտանգված կենսաբազմազանության վերականգնման հաջողված օրինակ

Կովկասյան ազնվացեղ եղջերուն կամ մարալն (*Cervus elaphus maral*) ազնվացեղ եղջերուի ենթատեսակ է: Մինչև 1954 թվականն ազնվացեղ եղջերուն լայնորեն տարածված է եղել Հայաստանի Հանրապետության հյուսիսային, արևելյան և հարավային անտառներում և հնարավոր էր տեսնել բնության մեջ: Կովկասյան ազնվացեղ եղջերուն գրանցված է Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»: Կովկասյան ազնվացեղ եղջերուն իր «վերադարձը Հայաստանի Հանրապետություն կատարվեց 2018 թվականին՝ Իրանի Իսլամական Հանրապետությունից բերված 14 առանձնյակով»:

2013 թվականից սկսած Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաձյուղի (WWF-Armenia) և ՀՀ շրջակա միջավայրի նահարարության կողմից իրականացվում է «Կովկասյան ազնվացեղ եղջերուի վերաբնակեցումը Հայաստանում» ծրագիրը՝ իրականացվում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Կովկասի բնության հիմնադրամի (CNF) աջակցությամբ: Ծրագրի հիմնական նպատակն է ազնվացեղ եղջերուի պոպուլյացիայի վերականգնումը Հայաստանի Հանրապետության անտառներում: Ծրագիրն իրականացվում է «Դիլիջան ազգային պարկում» կառուցված «Կովկասյան ազնվացեղ եղջերուի բազմացման կենտրոնում»: (նկ.)



**Կովկասյան ազնվացեղ եղջերուն «Կովկասյան ազնվացեղ եղջերուի
բազմացման կենտրոնում»**

Այսպեղից ծնված և հասուն տարիքի հասցված եղջերուներին այնուհետև ևս չպար են արձակվում բնության մեջ ինքնուրույն ապրելու:

Մինչ ծրագրի մեկնարկը, 2012 թվականին Բնության համաշխարհային հիմնադրամը իրականացրել է դաշտային հեղափոխություններ՝ «Դիլիջանտ ազգային պարկի» և «Շիկահողե արգելոցի» սահմաններում փետակի վերաբնակեցման հնարավորության գնահատման ուղղությամբ: Այս աշխատանքների արդյունքում կենդանու համար վերաբնակեցման բարենպաստ վայր ընտրվել է՝ «Դիլիջանտ ազգային պարկը»:

2022-23 թթ.-ի դրությամբ կենտրոնում արդեն իսկ ծնվել էր 23 ձագ: Ներկայումս կենտրոնում բնակվում է 37 առանձնյակ: Եղջերուների առաջին փորձնական խումբը, թվով 3 առանձնյակ, բնություն ազատ արձակվեց 2022 թվականի հոկտեմբերին: Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաձյուղի փվյալներով 2024թ.-ին հայաստանյան անտառներ կվերադառնան ևս 10 եղջերու, որոնց վերահսկման համար կօգտագործվի GPS փեդորոշման վզկապներ:

Ծրագրի Էկոլոգիական նշանակությունը: Ազնվացեղ եղջերուի վերաբնակեցման ծրագիրն առաջին հերթին բնապահպանական է՝ պայմանավորված էկոհամակարգում եղջերուների կարևոր դերով: Վերջիններս բնական ինժեներներ են, որոնք իրենց արածման վարքով նպաստում են անտառներում սերմերի տարածմանը, բուսականության մաքրմանը և հողի պարարացմանը՝ այսպիսով խթանելով ամուր էկոհամակարգերի զարգացումը: Ծրագրն ունի նաև փնտրման նշանակությունը: Եղջերուների վերաբնակեցումը «Դիլիջանտ ազգային պարկում» խթանել է զբոսաշրջությունը. 1 փարվա ընթացքում կենտրոնն ընդունում է շուրջ 50 000 այցելու: Ծրագիր սոցիալական նպատակն է՝ իրազեկման արշավների միջոցով դպրոցականների, փեդակա համայնքների բնակիչների մոտ վերափոխել բնության հանդեպ վերաբերմունքը և ձևավորել՝ ներդաշնակ ապրելակերպ: